

Տևողությունը – 150 րոպե

1. Հաշվել՝ արտահայտություններից որի^օ արժեքն է ամենամեծը.
1) $2 \times 0 + 1 + 7$ 2) $2 + 0 \times 1 + 7$ 3) $2 + 0 \times 1 \times 7$ 4) $2 \times 0 \times 1 \times 7$

2. Գտնել 10-ի և 24-ի ամենամեծ ընդհանուր բաժանարարի և ամենափոքր ընդհանուր բազմապատիկի գումարը:
1) 122 2) 120 3) 240 4) այլ արժեք

3. Ինչի^օ է հավասար 10 հարյուրավոր + 10 տասնյակ +10 միավորը
1) 111 2) 1101 3) 1110 4) 1011

4. Քանի^օ հատ երկնիշ թիվ կա, որոնց գրառման մեջ առկա է 1 թվանշանը
1) 19 2) 10 3) 18 4) այլ արժեք

5. 2, 3, 6, 8, 10, 18, 95 թվերից քանի^օ հատն են հանդիսանում 380-ի բաժանարար:
1) 6 2) 5 3) 4 4) այլ արժեք

6. Արմենը գործուղման մեկնեց երեքշաբթի օրը և վերադարձավ այդ օրվանից սկսած 17-րդ օրը: Ո՞ր օրը գործուղումից վերադարձավ Արմենը:
1) հինգշաբթի 2) երեքշաբթի 3) շաբաթ 4) կիրակի

7. Արամի մոտ կան հավասար քանակությամբ 50, 100 և 500 դրամանոցներ, և չկա որևէ այլ մանրադրամ կամ թղթադրամ: Հետևյալ գումարներից ո՞րը կարող է լինել Արամի ունեցած փողի քանակը:
1) 20150 2) 21000 3) 45050 4) 19050

8. 1,2,3,4,...,98,99,100 թվերի քանի^օ հատն են 5-ով մեծ այդ ցուցակի որևէ այլ թվից
1) 20 2) 95 3) 100 4) այլ արժեք

9. Քանի^օ եռանիշ բնական թիվ կա, որոնց թվանշանների գումարը հավասար է 3-ի:
1) 6 2) 5 3) 10 4) այլ արժեք

10. Ավտոկայանատեղիում ընդհանուր առմամբ կանգնած են 156 բեռնատար և մարդատար մեքենաներ: Գտնել բեռնատար մեքենաների ընդհանուր քանակը, եթե հայտնի է, որ 3 հատ բեռնատար մեքենային համապատասխանում է 10 հատ մարդատար մեքենա:
1) 32 2) 40 3) 48 4) այլ արժեք

Տևողությունը – 150 րոպե

11. Բանվորը պետք է սալիկապատի քառակուսի սենյակի հատակը: Նա խանութից գնեց այնպիսի սալիկներ, որ հատակը սալիկապատելու համար կարիք չլինի կտրել ոչ մի սալիկ: Սկզբում նա շարեց սենյակի չորս պատերի երկայնքով մի շերտ, որի համար նրանից պահանջվեց 24 սալիկ: Պարզել, թե քանի՞ սալիկ է անհրաժեշտ ամբողջ հատակը ծածկելու համար:

- 1) 36 2) 49 3) 144 4) այլ արժեք

12. Գտնել օրինաչափությունը և գտնել բաց թողնված վանդակի թիվը:

0	7	2	4	12	6	3
	7	9	6		18	9

- 1) 16 2) 8 3) 19 4) 14

13. Դոմինոն ունի 28 քար: Քանի՞ քար կունենար դոմինոն, եթե դոմինոյի քարերը բաղկացած լինեին ոչ թե 0-ից 6 թվերից, այլ 0-ից 9 թվերից:

- 1) 36 2) 45 3) 55 4) այլ արժեք

14. Նապաստակը մեկ րոպեում կատարում է 90 ցատկ, յուրաքանչյուրը 20սմ երկարությամբ, իսկ կենգուրուն 10վայրկյանում կատարում է 3 ցատկ, յուրաքանչյուրը 1մ 50սմ երկարությամբ: Գտնել կենգուրուի և նապաստակի արագությունների տարբերությունը:

- 1) 6մ/ր 2) 9մ/ր 3) 12մ/ր 4) այլ պատասխան

15. Այժմ ժամը 14:26 է: Ժամը քանի՞ սը կլինի 189 րոպե անց:

- 1) 17:35 2) 14:26 3) 19:52 4) այլ պատասխան

16. Քառակուսիայի հանրագիտարանը բաղկացած է երկու հատորներից, որոնցից յուրաքանչյուրի հաստությունը 9սմ է, ընդ որում բովանդակության մասի (էջերի) հաստությունը 7սմ է, իսկ դիմացի և հետևի կազմերի հաստությունները 1սմ են: Պահարանում, սովորականի պես, իրար կողք դրված են հանրագիտարանի առաջին և երկրորդ հատորները: Քանի՞ սմ է հանրագիտարանի առաջին հատորի առաջին էջի և երկրորդ հատորի վերջին էջի միջև եղած հեռավորությունը:

17. Ի՞նչ թիվ պետք է դնել ? նշանի փոխարեն, որպեսզի $20 \times 18 \times 4 \times 3 = 80 \times ?$

18. Մտապահված թիվը բազմապատկեցին 12-ով, այնուհետև ստացված թվին գումարեցին 7 և ստացվեց 11-ից 17 անգամ մեծ թիվ: Գտնել մտապահած թիվը:

19. Քառակուսու պարագիծը հավասար է 32: Գտնել նրանից երկու անգամ մեծ պարագծով քառակուսու մակերեսը:

20. Մեկ կիլոգրամ նարինջը 4 անգամ թանկ է նույնքան խնձորից: Գտնել մեկ կիլոգրամ նարինջի գինը, եթե հայտնի է, որ մեկ կիլոգրամ նարինջը երկու կիլոգրամ խնձորից 300 դրամով թանկ է: